



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5740

07
S-34

2010

EB 2001

ՏԵՍՈՒԹԻՒՆ

125 ԹԻ

ԱՐԵՎԵՐԻ

ՀԵՆՐԻՍԻՆ

Հայրենիքի համար



ԿՈՍՏԱՆՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՐԻ ԵՈՂԿ. ՏԻՐՈՅԵՆՑ

1861

07
S-34



THE UNIVERSITY OF CHICAGO

PHILIP H. RAVEN



UNIVERSITY OF CHICAGO

PHILIP H. RAVEN

1881

07

ՏԵՍՈՒԹԻՒՆ

Լ-34


125 ԹԻ

72

4



ՆԱԳԻՍԻՆ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎ. ՏԻՐՅԵՆՅ

[1861]

9367

Տուր անդգամին զպատասխանի ըստ
նորա անդգամութեան :

(Սիրոյ)



951
♀ 39

Ա.

Քանի մը որ յառաջ բարեկամի
 Վր տուն գտնուեցանք, ուր մեզի իմա-
 ցուցին թէ՛ կաղանդին գիշերը մեղ-
 ուին երազին մէջ մէջուխէչան երեւցեր,
 եւ անոր լիակատար իշխանութիւն տա-
 լով ապսպրրեր է որ՝ այսուհետեւ իր
 ուշադրութեան մեծ մասը ազգին ընդ-
 հանուր կղերին վիճակին վրայ դար-
 ձունէ. որ մեծ կարօտութիւն ունի
 ուղղութեան եւ բարելաւութեան ։

Այս լուրը առջի բերանը դժուա-
 րահաւատալի կըթուէր մեզ, որովհե-
 տեւ Մ եղուն անձամբ ճանչնալու դրժ-

քաղղութիւնն արդէն ունէինք . դեռ
 հաղիւ տարի մը կը ըլլայ՝ որ Ս՝ եղուն շա-
 րունակ կը բզզար , ու Հայոց ազգին
 նոր պատրիարքին ընտրութեան խընդ-
 րոյն մէջ նետուելով , առանց նկատելու
 ազգին պատիւը՝ այն օրինաւոր եւ վա-
 ւեր ընտրութիւնը խանգարելու կ'աշ-
 խատէր : Բայց մէշուխէջան ասոր հա-
 մար կըսէ եղեր որ՝ Սեղուն յայդ մ մա-
 սին կրօնական միջամտութիւն չըրաւ .
 որովհետեւ խնդիրը քաղաքականու-
 թեան երեւոյթ ունէր : - Հապա Ս՝ ան-
 ցի Պօղոս վարդապետին խնդիրը ի՞նչ
 երեւոյթ ունէր . որուն մէջ ոտքով
 դըխով նետուեցաւ Ս՝ եղուն օրերով , ա-
 միսներով , թերթերով , յօդուածնե-
 րով եւ յաւելուածներով պօռաց պօռ-
 չըտեց . այն խնդիրը կրօնական , եւ այն
 անձը եկեղեցական չէ՞ր : Ս՝ էշուխէ-
 ջան ասոր ալ կը պատասխանէ եղեր որ՝

Մեղուն այդ խնդրոյն մէջ նետուեցաւ նէ
Պօղոս վարդապետի նկատմամբ չէր ,
Սանցի Պօղոս ախպար անունով կար-
գէն լուծեալ աշխարհականի մը նկատ-
մամբ էր : - Ես որ ըսելիք մը պիտի
չունենայինք՝ թէ որ Մեղուն իր խօս-
քին վրայ ժինչեւ վերջը հաստատուն
մնար . բայց ի՛նչ շահ . իր թքածը ինք
լըզեց , եւ փօղոցներուն մէջ կարգէն
լուծած անձը եկեղեցական բարձրագոյն
Ետենին առջեւ օրինաւոր եկեղեցական
խոստովանեցաւ : Ես որ համար մէջուխե-
չանն ալ իր թքածը թող ինք լըզէ :

Մենք այսպիսի փորձերով ար-
դէն դիտէինք որ Մեղուն խառնածին
հրէշի պէս երբեմն քաղաքականութեան
դիմակով երեւան կուգայ , երբեմն ալ
եկեղեցական իշխանութեան աթոռը
բաղմելով՝ կղերական կարգէն ո՛րը կը
զատէ եւ կը դատապարտէ , ո՛րը կը դո-

վէ եւ կը վարձատրէ . (կըսուի թէ այ-
սուհետեւ ձեռնադրութիւն ընելու փա-
փաքով սուրբ գրոց եւ եկեղեցական
մատենագրաց մէջ կը թարթափի եղեր)
ուստի Մեղուին երազով ընդունած իշ-
խանութեան լուրը անհիմն սուտ մը
կարծելովս հաւատալու կը դժկամակե-
ինք . սակայն ուրիշ մէկը որ Մեղուին
գործակալութեան արժանապատու-
թիւնը ունէր, խնդիրը խկոյն լուծեց
նոր տարիին շնորհաւորութեան թեր-
թը մեղի յանձնելով :

Ինչ եւ իցէ, մենք Մեղուէն ո՛չ
ուղղութիւն եւ ո՛չ բարելաւութիւն չե-
ինք սպասեր . որովհետեւ չորս տար-
ուան շրջանին մէջ քանի մը խեղկատա-
կութենէ եւ ծաղրածութենէ զատ բան
չտեսանք, աւելի ստոյգ խօսելով՝ նո-
րասէրնե՛րուն մեծ, ծառայութիւն մա-
տակարարեց, ըստ որում իր ճօրայի

տեսօարանը այն աստիճան կատարելու-
 թեան հասուց՝ որուն չէր հնար հաւա-
 սարիչ Աւրոպայի է՛ն երեւելի հարիւ-
 դանէն անգամ : Բայց որովհետեւ
 այսպիսի անակնկալ խոստում մը եկե-
 դեցականաց նկատմամբ մեծ կարեւորու-
 թիւն ունէր, ուստի պէտք եղաւ որ
 հետաքրքրութեամբ սպասենք քիչ մը ժա-
 մանակ ալ, որ տեսնանք թէ այսուհե-]
 տեւ ի՛նչ ղիմակով պիտի երեւան գայ :

Ապասեցինք մինչեւ մարտի սկիզբ-
 ները (որովհետեւ փետրվար 20ին ել-
 լելու թիւը նոյն ամսոյն 27ին աշխարհք
 եկած լլլալով, հաղիւ բարեկենդանին
 մեր ձեռքը հասաւ) . տեսանք, և կար-
 գացինք ծայրէ ՚ի ծայր : - Միթէ՛ ՚ի
 փշոց քաղե՞ն խաղող, կամ ՚ի տատաւ-
 կէ թուղ, - ո՞րատեն մեր Մեղուն փե-
 թակէն մեղը դուրս ելաւ. Մեղուն ա-
 ռաջ ի՛նչ որ էր նէ, հիմայ ալ նոյնն է :

այսուհետեւ ալ ուրիշ բան ըլլալիք
չունի . միայն սա աղէկ զիտնալ պէտք
է որ՝ **Մեղուն** որ մինչեւ այս տար-
ւոյս սկիզբը անխոնջ աշխատութեամբ
աշխարհականները ուղղելու պաշտօնը
կը վարէր . խնդկատակութեան եւ
ծաղրածութեան դիմակով երեւան կու-
ղար . իսկ այսուհետեւ՝ որ եկեղե-
ցականները ուղղելու եւ անոնց վի-
ճակը բարելաւցընելու մեծագործու-
թեան ձեռք զարկեր է . ոխերի՛մ ա-
տելութեան եւ անխիղճ երգիծաբա-
նութեան դիմակ պիտի հագնի եղեր :

Դժբաղդաբար **Մեղուն** շնորհաւո-
րութեան թիւերը դուրսերը ցլուած ա-
տենը գեղջուկ ընթերցողաց վրայ տար-
բեր՝ տպաւորութիւն ընելով . հեռուեալ
երկու աղերսագիրն ստորագրած են ,
խնդրելով որ մէջուխէչային շնորհիւր
Մեղուն գրատունը հասնի :

§ 1.

Առ գերիմաստ խմբագիր-անօրէն
Մեզուի ուղղիչ ազգիս Հայոց շնորհիւ հա-
ւատարիմ գործակցի ձերոյ մէջուխէջսցե
խոնարհ աղերսարկութիւն:

Նախ մեծ շնորհակալութիւն կը մա-
տուցանեմք ձեր գերիմաստութեան, որ
քանի տարիէ 'ի վեր ձեր հրաշարան
հանդիսին միջոցաւ ուղղել հաճեցայք մեր
մեծաց եւ փոքունց կորացեալ մէջքերը,
որ մինչեւ յերկիր խոնարհեալ գլուխ-
նիս քարին զարնուելու վրայ էր:

Եւ արդ կաղաչեմք ձեզ ո՛ր գերի-
մաստ Տէր (այս բառին գործածութեա-
նը դուք ալ զիջում ըրած ըլլալով կը
յուսամք որ ակազար բառը չգործածել-
նուս անմեղադիր կըլլաք) որ բարեհո-
ճիք մեր յետագայ խնդիրը կատարելու:
Եսած էք որ մեք սակաւաթիւ ժողո-

Վերդքս քահանայ ունենալու անբաւա-
կան ըլլալով տիրացու Ս . . . ը ժա-
մերնիս կը բանար կը գոցէր , բայց քա-
նի մը օր առաջ դժբաղդութեամբ տա-
նիսէն վար խոնալով , ձեռքը ծանր վե-
րաւորուեցաւ , եւ թէպէտ շատ աշխա-
տեցանք՝ բայց վերջապէս խեր չըրաւ ,
ձեռքին մէկը ծուռ մնաց . ուստի կ'ա-
ղաչեմք որ օր յառաջ շնորհք ընէք ա-
նոր ձեռքը ուղղելու՝ որ մեծ ուղղու-
թեան կարօտ է , որ ժամերնիս նորէն
բանայ , եւ մենք ալ ձեր շնորհիւր մը-
խիթարութենէ չզրկուինք :

Ս նամք գերիմաստութեան ձերոյ

Բուսիան

Երախտապարտ գերիք

չոնի

Բնակիչք աներեւոյթ գիւղի :

Կղերական դասուն վիճակին բարեկարգիչ

Գերապատիւ Մեղու

Ի կարօտ եւ չքաւոր ստորագրելոց
յայտարարութիւն

Աշխարհականաց վիճակը բարելա-
ցունելու պաշտօնը վարած ատեննիդ
մէջ առ մէջ եկեղեցականաց վիճակին
նկատմամբ ձեր տուած մասնաւոր տեղե-
կութիւնները իրաւունք կուտային մեզի
յուսալու՝ որ օր մը չէնէ օր մը պաշ-
տօն առնելով հարկաւ ձեր ուշադրու-
թեան մեծ մասը կղերական դասուն
վրայ պիտի դարձունէք: Ասկից կրնանք
մակաբերել թէ որչա՛փ մեծ ցնծումով
ընդունեցինք նոր տարւոյս մեղուին թեր-
թը, որուն անձկանօք կ'սպասէինք մեր

գործակալ Պ. Մ. . .ին հեռագրաթելին
միջոցաւ մեզի խապար տուած օրէն 'ի
վեր՝ որ դուք այսուհետեւ եկեղեցա-
կանաց վիճակը բարելաւցունելու ձեռ-
նարկութիւն ընել խոստացեր էք:

Ձեզի յայտնի է որ մենք թէպէտ
երկու քահանայ ունինք, բայց կարօտ
եւ չքաւոր ըլլալնուս համար՝ երկու-
քընալ անտանելի թշուառութեան վի-
ճակի մէջ են. ուստի թէ որ բարեհա-
ճիք կարելի եղածին չափ կանուխ բա-
րելաւցունելու մեր կղերին վիճակը,
սպիտի ըլլանք

Գիրս Յեւր
Հասած օրը

Ձեր գերապատուութեան
մշտն ջինսկան արծաթագին
հայրենակիցք մէշուխէչային:

Շատ հաւանական է որ այս կարեւոր աղերսագիրը մէջուխէչային անձնանուէր հաւատարմութեան շնորհիւ մինչեւ հիմայ Մեղուին գրասենեակը հասած ըլլայ : Սակայն ուղղութիւն եւ վիճակի բարելաւութիւն եւ ամէն տեսակ բարեկարգութիւն իր տունէն եւ մօտերէն սկսելը օրինաւոր է : Չեմք վարանիր՝ որ այն խեղճերուն աղերսը ընդունելութիւն պիտի գտնէ Մեղուին ուշադրութեան առջեւ, բայց Մեղուն չափազանց ազգասէր է. ազգին սիրոյն համար թրնախ կարողներ շատ տեսած է. (եւ կը յուսանք թէ անոնցմէ մէկն ալ ինքն է), անոր համար գիշեր ցերեկ կ'աշխատի. թերթ չթողուր կը լեցունէ, պէտք ըլլայ նէ յաւելուած մի ալ կ'աւելցունէ, եւ թէ ներքնոց մօտաւորայից եւ թէ արտաքնոց եւ հեռաւորաց խնդիրը իր ուշադրութենէն չվրի-

պելով, անոնց կշերն ուղղելու եւ վի-
ճակնին բարելաւցընելու հոգը չմոռնար:
Իայց հիմայ հեռուինները հեռուն թող
մնան՝ քովիններնուս նայինք:

Բ.

Ուրեմն ձեռք առնենք Մեղուին
125 թիւը. եւ աչքերնիս չորս բա-
նանք՝ որ եղած ուղղութիւններն եւ
բարելաւութիւններն մեր տեսութենէն
չվրիպին: Փետրվար 17 ին ինդհանուր
ժողովին համառօտ կամ հարեւանցի
նկարագրութեան յօդուածին մէջ (այս
յօդուածը Մեղուին 16 էջերէն 10ը
ընցուցեր է. կերեւի թէ համառօտ
կամ հարեւանցի չղրէր նէ՝ Մանկա-
սարին հարսնիքէն երկար պիտի քչէր)
յիշուած եկեղեցականներն են կրօնա-
կան ժողովին մէջէն անանուն քահա-

նայ մը, մայր եկեղեցւոյ աւագերէց
տէր Վէորգը, Յակոբ սրբազանը եւ
արդի պատրիարք Սարգիս սրբազանը :
Սարգիս եւ Յակոբ սրբազաններուն եւ
տէր Վէորգին անունները քանի մը
անգամ կրկնուելուն, եւ անոնց բերա-
նը դրուած խօսքերէն քաջքոտողական
մեկնութիւններ հանելու ատեն կրօնա-
կան ժողովին անգամ քահանային ա-
նունը վարագուրելուն, եւ անոր բե-
րանը դրուած խօսքին մեկնութիւն չը
տրուելուն մեծապէս պիտի զարմանա-
յինք. թէ որ ասոր պատճառը մինակ
Սեղուին յայտնի ըլլար. եւ որչափ որ
մենք ալ գիտենք նէ՝ մեկնութեան եւ
պատճառաբանութեան երաժ չըլլանուս
համար կը լռենք. մեր յայդմ մասին
տղէտ չըլլալը Սեղուին հասկըցունեննիս
բաւական սեպելով :

Տեսնենք այսուհետեւ եղած ուղ-

դու թիւններն եւ վիճակի բարելաւու
թիւններն :


Տէր Վէորգը ուշադրութեան
կարօտ է , իւր զի ըստ տեսութեան և
ուշադրութեան Մեղուի, «Քաղաքական
ժողովոյն որոշման դէմ արգելք հա-
նել կուզէ եղեր » : Խեղճ տէր Վէ-
որգ , թէոր Մեղուն Պիղատոսին չափ
իշխանութիւն ունենար քու վրադ՝ մին-
չեւ հիմա քանի մը անգամ քեզ խաչս
հանած էր , մանաւանդ այս վերջին ան-
գամ գործած աններելի յանցանքիդ
համար՝ որ քաղաքական ժողովքին դէմ
արգելք հանել կուզես :

- Վայց ատկէց ի՛նչ կըլլայ , մի
թէ իւրաքանչիւր անգամոց ո՛ր եւ է
ժողովքի մէջ առարկելի նիւթոյ մը վը-
րայ իրենց խելքին թելադրածը ամենայն
ուշադրութեամբ զուրյելու օրէնքը ջըն-
ջրուե՞ր է . կամ թէ սկէտք էր բո՞ղ

չորովին մտանալ որ Մովսէսն անգամ,
 Ըստուծոյ որոշման դէմ քանի քանի ար-
 գելքներ դնելու արգելք մը չունեցաւ :
 -կրնաս նէ ատօնք Սեղուին զրուցէ ,
 եւ տե՛ս նայէ՛ ի՛նչ հանճարուոր փաս-
 տափանու թիւններով կը պատասխանէ :

Գանք Յակոբ Արբազանին , այս
 ալեղարդ ծերունին ալ Մեղուին ու-
 շադրութենէն չէ վճիպիր .) փասն զի
 « Սարգիս սրբազանին խօսքը բէրանէն
 յափշտակելով , եւ Երուսաղէմի միա-
 բանութեան վրայ վստահութիւն ունե-
 նալ խնդրելէ յետոյ , խօսքը Քերեր
 հոն թէ լրագիրներն եկեղեցականնե-
 րուն վարժուցքը կը բամբառեն , , . եւ
 այլն եւ այլն . Մեղուն այս տեղ քա-
 նի մը տրամաբանական ուղիղ եւ բը-
 նական հետեւութիւններ հանելով ,
 որպէս թէ Յակոբ սրբազանին սրտին
 խորերը կը թափանցէ , անոր « ճոցի

951
39



խաչը երեւան հանելու համար , յի՛նչ
 կը կարծես Պարո՛ն , քու ցած ընդ
 վայրախօսութիւններովդ այն պատկա-
 ռելի ծերունոյն արժանիքը պիտի կըր-
 նաս արհամարել . դեռ դուն Մեղու չե-
 դած եւ մէջուխէջան աշխարհք չեկած
 հայոց ազգը Յակոբ Արբազանը ճանչ-
 ցեր է , եւ այսօրուան օրս կը սիրէ այն
 խոհական գլուխը՝ որ դժուարին պա-
 րագայներու մէջ ազգին կառավարու-
 թեան ղէկը ամենայն իմաստութեամբ
 գործածեց . այն ալ քեզի պէս անմիտ
 կը կարծես , որ Արուսաղէմի միաբա-
 նութեան խնդրուն մէջ լրագիրներու
 անպատշաճ եւ աւելորդ խնդիրը մէջ
 բերելով , գործոյն էութիւնը կերպա-
 րանափոխ ընելու աշխատի :

Քանի՞ միամիտ կրնաս գտնալ աշ-
 խարհիս վրայ , որ ըսածներդ կը ընելու
 համար առ եկեղեցականս ունեցած կեղ-

Ծաւորեալ բարեկամութեանդ հաւատք
ընծայեն . քրիստոնեայները չեն կրնաք
մոռնալ որ իրենց Տէրն ալ կեղծաւորեալ
համբուրիւ մատնուեցաւ . ուստի՛ պա-
րապ տեղը մի՛ աշխատիր ինքզինքդ ե-
կեղեցականաց բարեկամ ձեւացունելու .
որ թէեւ թշնամի ալ ըլլաս , զէնքիդ
շառաչիւնը քուհիններուդ միայն լսելի
կըլայ : Մինչեւ ցայսօր քանի՛ եկեղե-
ցական տեսանք գրածներուդ մէջ որ
արժանապէս գովեցիր , Ներսէս վարդ-
ապետ մը եւ տէր Յովհաննէս քա-
հանայ մը ունէինք , անոնց ալ տալու
գովեստդ քանի մը խեղկատակ ծաղ-
րաբանութեանց մէջ խղզելով անյայտ
ըրիր :

Ինձերցողաց ուշադրութիւնը կը
խնդրենք Սեղուին կարծեցեալ ուղղու-
թեանց վրայ . “ Յակօր վարդապետը
Արուսաղէսի միաբանութեան կողմանէ

պատգամաւորի պաշտօնով ներկայացած
ատենը բերանը խփելու տեղ . միաբան-
ութեան կամքը յայտներ է , . իրո-
ղութիւն մը որ Սեղուին տեսութեան
առաջը քրէական յանցանաց կարգը կը
սեպուի . որովհետեւ այն անձը թէ և
Քնդհանուր ժողովին կողմանէ խօսե-
լու արտօնութիւն եւ բնականաբար ի-
րաւունք ունէր ալ նէ , մէջուխէչայէն
հրաման առած չէր , միաբանութեան
կամքը յայտնելու . եւ անոր վաւերա-
կան խնդրագիրը ժողովոյն ներկայացը-
նելու : Ամէն ասեմ քեզ մէջուխէչա .
թէ որ Սեղուին հետ քանի մը ուղղիչ-
ներ ալ կենային . երկրագունդին ձեւը
իսկոյն տափարակի կը փոխէին , և աշ-
խարհագրական եւ աստղաբաշտական
հաշիւները բոլոր տակն ՚ի վերայ կը-
նէին :

Ս ենք մինչեւ հիմա կը կարծէինք

որ Սեղուին ուշադրութիւնները կեն-
դանի եկեղեցականաց միայն կը վերաբե-
րին . բայց այսուհետեւ պէտք եղաւ որ
կարծիքնիս փոխենք . որովհետեւ ուղ-
ղութեան գործիքները ձեռքը՝ պերեզմա-
նէն անդին միւս աշխարհքը անցեր է .
հոն գտնուած ուղղութեան եւ վիճակի
բարելաւութեան կարօտներուն վրայ իր
ուշադրութեան մէկ մասը դարձունելու
համար :

Այս պատճառաւ պատշաճօպէս
կ'սկսի հանգուցեալ Յովհաննէս պատ-
րիարքին ուղղութիւններուն , որ երբեմն
«ազգային քաղաքական ժողովոյն կող-
մանէ երկու անձ գացեր են զինքը Պօ-
լիս բերելու նէ , իր տեղը քանի մը
մոզական սնտուկներ խրկելով , զինքը
կանչողները կախարդեր ու գալը ետ ձը-
գեր է » : Հանդերձ այսու ամենայնիւ
մեղուին ներողամտութենէն կը յուսանք

որ Յուլիաննէս Արքազանին Իուզղու-
 թիւնը լմնցած կը համարի. վասն զի
 անիկայ թէ որ այդ կերպով Պօլիս գա-
 լէն ազատեցաւ նէ. յայտնի է որ յա-
 փտենականութեան մէջ ալ շերթալու
 համար այդպիսի միջոց մը չկրնալով՝ ի
 գործ դնել՝ բաժնուեցաւ աշխարհքէս ՚ի
 միսիթարութիւն սրտի մէջուխէչային :

Արուսաղէմի հանգուցեալ պատրի-
 արքէն վերջը Մեղու կ'սկսի նոյն վան-
 քին միաբանութեան վիճակը բարելա-
 ցունելու, ոչ եթէ իր մեծագործութեան
 սկիզբը այսօրուրնէ սկսելով՝ այլ ինք-
 ղինքը 30-40 տարի յառաջ երեւակա-
 յելով, իբր զի « այն ատենը ազգը
 Արուսաղէմի միաբանութեան կամաց
 հակառակ հազուագիւտ եպիսկոպոս մը
 խրկեր է, բայց քիչ ատենէն վանքի
 միաբաններուն ձեռօք այն անձը թու-
 նաւորվեր է, : Եւ չէ կարելի է, Մե-

զուն ազգային կենաց տարեգիրն ըլլա-
լով այսպիսի երեւելի գէպքերը հար-
կաւ կը գիտնայ . բայց եպիսկոպոսին ա-
նունը կըլլելը ոչ թէ միայն պատիւ չըն-
րեր իրեն , այլ և իր ըսածն ալ կասկածե-
լի կը թողու . որովհետեւ չեմք կարծեր
որ անուն ըսուած բանն ալ եպիսկոպո-
սի անձի պէս հազուագիտ եղած ըլ-
լայ :

Ինչ եւ իցէ՝ Ս եղուն « կը վախ-
նայ որ վերոյիշեալ եպիսկոպոսին գըլ-
խուն եկածը մեր սիրելի պատրիարքին
ալ գլխուն կուգայ » : Ինչ կըլլայ . այս
անգամ ալ ազգային քաղաքական ժողո-
վը Արուսաղէմի միաբանութեան կա-
մաց հակառակ Սարգիս Արքայանը հոն
կը խրկէ . քիչ ատենէն անոր թունա-
ւորուելուն ցաւալի լուրը առնելու դրժ-
բազդութիւնը կունենայ :

Ես խօսքերը՝ որ արիւնկզակ դա-

ւաճաններու բերանոց միայն վայելուչ
 են սոսկումով աչքէ անցուցած ատեննիս,
 մտքերնիս եկաւ Սմբատ Տաւրատունին
 զՄեհրուժանը Հայոց թագաւոր պա-
 կելուն եղանակը, եւ փափաքեցանք որ
 այնպիսի ձեռքերէ եւ այն կիրպով զար-
 ձատրուին ամէն անոնք՝ որ թէ եւ ա-
 նուննին փոխուած է, բայց հոգինն եւ
 սրտերնին Վասակայ եւ Մեհրուժանայ
 անիծեալ սիրտն եւ հոգին է:

Մի թէ Վասակին կամ Մեհրու-
 ժանայ ըրածներէն վարկը մնա՞ Մեղ-
 ուին ըրածները. նախ մտածէ՛ մէջու-
 խէչային արդի աստիճանը եւ բաղդատէ՛
 Սիւնեաց իշխանին մեծափառ իշխանու-
 թեան եւ պատուոյն հետ, եւ յետոյ
 մտախոհ եղիւր որ եթէ չքոտի Մեղուն
 իր անարգ վիճակին մէջ այսպիսի տնա-
 շէրու թիւններ կընէ նէ, անոնց պա-
 տիւր, ազնուականութիւնը. եւ կարո-

ղութիւնը ունենար նէ՛ ինչե՞ր պիտի
չընէր :

Արուսաղէմի վանքը իբր այրաւա-
զակաց , եւ միաբանութիւնը իբր մար-
դախոշոշ հրէշներ աշխարհի առջեւ ներ-
կայացունելը բաւական չսեպելով . կը
ջանայ կրօնական ժողովի ալ՝ որ Հայոց
ազգին եկեղեցական իշխանութիւնը կը
ներկայացունէ , կահածելի ցուցունե-
լու : Արուսաղէմի միաբանութիւնը մարդ
թունաւորելու եւ հաղուազիւտ եպիս-
կոպոսներ սպաննելու փորձեալ ներկա-
յացունելով . կրօնական ժողովն ալ կը
ներկայացունէ համամիտ , կամակից եւ
՚ի հեռուստ գործակից Սարգիս սըր-
բաղանին համար Արուսաղէմի վանքին
մէջ պատրաստեալ դաւադրութեանց :

Եսկից աւելի ազգասիրութիւն ,
ճշմարտասիրութիւն՝ եւ եկեղեցականաց
բարեկամութիւն կրնա՞յ ըլլալ . ինձի շէք

հաւատար նէ , ականջնիդ Մեղուին գը-
րածներուն տուէք . եւ փակագծի մէջ
դրած հետեւեալ խօսքերը աչքէ ան-
ցուցէք . « Նրուսաղէմի միաբանութեան
մեծագոյն մասին վրայ բարոյական մեծ
վստահութիւն ունինք եւ ուրիշ միա-
բաններէն աւելի կը սիրենք . բայց ա-
մենքն ալ մէկ սիրա մէկ հոգի չեմք
կրնար ճանչնել , եւ իւրաքանչիւրին ալ
երաշխաւոր չենք կրնար ըլլալ » :

Մեր գիտցածին նայելով՝ այս-
պիսի կեղծուպատիր եւ անյարիր խօս-
քերով նախ կարելէր խոցել եւ յետոյ
կեղծաւոր շողօքորդութեամբ փայտա-
յելուն , կըսեն՝ համբուրելով մատնել .
կամ ուրիշ բառով՝ դաւաճանութիւն . և
Մեղուին այս յօդուածը սկիզբէն կար-
գալով՝ դաւաճանութենէ զատ բան չեմք
տեսնար . թէ որ մեր ըսածներուն չը
հաւատար նէ՝ առաջ մէջուխէջան քովէն

Թող հեռացունէ , եւ ապա իր գրած ներք ինքն ալ աչքէ անցունէ անգամ մը , տեսնանք թէ այն ատենը իր ըրածին ի՛նչ անուն պիտի դնէ :

Սակայն՝ ինքն ի՛նչ անունով կանչէ ինքզինքը ալ նէ՛ հասարակութեան մէջ] ծառը պտուղէն ճանչնալու կարողութեան տէր մարդիկ պակաս չեն . ուստի՝ թէ որ մէկ ապացոյցով գոհ չըլլար . մենք կը յօժարիմք իր գրածներուն մէջէն ուրիշ անհերքելի ապացոյցներ բերելու : Աշխարհի ծանուցեալ օրէնք է՝ որ սահմանադրապէս կազմեալ ժողովի մը մէջ առարկելի խնդրոյ մը վերջին որոշումը քուէից առաւելու թեւէն կախումն ունի , եւ իրաւունքը կը պահանջէ որ գաղտնի քուէով քերեան ելած ընդհանրութեան որոշ կամաց , առջեւ ամէն կիրք եւ հակառակ շարժումներ պէտք է խոնարհին եւ զինա-

Թափ ըլլան : Մեղուն այսչափը չգիտնալու չափ տգէտ չէ . բայց ինքը ասանկ ըրա՞ւ . փետրվար 7ին Ընդհանուր Ժողովոյն նկատմամբ :

Մէ երբէք , մանաւանդ թէ՛ հընարք չթողուց 'ի գործ դրաւ , եկեղեցական չթողուց ամբաստանեց , եւ վատութիւն չթողուց՝ յանձն առաւ . բայց երբոր նայեցաւ որ իր ըսածներուն ականջ կախող չեկայ . եւ գործը իր չուզած կերպովը վախճան առաւ , անհնարին լրբութեամբ ժպրհեցաւ . ապա զգը ներկայացունող ընդհանուր Ժողովին մուր քսելու . զոմանս արատաւորելով՝ որ « շատաշրջիկ կրօնաւորներու կեղծաւորութեան զոհեր են իրենց մըտքին կարողութիւնը » . եւ զոմանս բամբասելով՝ որ « քանի մը չարամիտ նենգաւորներու « ո՛չ գրեցէքին » առջեւ ծունկ չոքելով երկրպագութիւն ըրեց են » .

եւ այնպիսի պատեհութեան մէջ՝ ուր
 ամէն մէկին խիղճը ամէնայն ազատու-
 թեամբ կրնար գործ տեսնալ, իրենց
 դիտակցութեան եւ զգացման հակառա-
 կը գործելով, մեծագոյն թիւը եպիս-
 կոպոս մը երթալ չուզողները կազմե-
 են : Այս ուրեմն բերաննիս
 վրայ չերթար այս խօսքերուն հետե-
 ւութիւնները յայտնի ըսելու . բայց՝ կը
 հարցունենք Մեղուն՝ ա՞յս ալ գա-
 ւաճանութիւն չէ, ա՞սոր ալ ազգասի-
 րութիւն ըսելու ենք : Բայց գեռ ա-
 րեւը արեւելքէն կը ծագէ, թէ որ օր
 մը արեւմուտքէն ծագիլ սկսի նէ՛ այն
 ատենը մենք ալ մեր խօսքերը կը փո-
 խենք . հիմակու հիմայ պարսպ տեղը
 մի՛ աշխատցուներ ընդերցողներդ, թէ որ
 ազգասիրութիւն բառը սոսինձով փակ-
 ցունենք վրագ, իսկոյն վար կի՛նայ .
 ամենեւին չպատշաճիր . ընդհակառակն

քանի որ այսպիսի ընթացք մը փոխն-
լիք չունիս նէ, սեւամորթ մարդոց
ճերմկնալէն յոյս կրնանք ունենալ, քու
դաւաճանութիւն չընելէդ յոյս չեմք
կրնար ունենալ. կուզես եկեղեցականաց
բարեկամ ձեւացիր. կուզես միշտ ազ-
գասիրութեան պիմակ հագիր, եւ թէ որ
ձեռքէդ կուգայ նէ՝ մինչեւ լուսաւոր
հրեշտակի կերպարանք ա՛ռ, մենք քեզ
ճանչցանք եւ ի՛նչ ըլլալդ պիտեմք :

Մ'եղուն՝ որ իր անպատշաժ գըր-
ուածքներովը տեղիք տուած է մեզի
այսպիսի դիտողութիւններ ընելու, թո՛ղ
չզայրանայ. մանաւանդ թէ անկեղծու-
թեամբ թող աշխատի ինքզինքը ցու-
ցընելու այն կերպով. ի՛նչպէս որ ճանչ-
ցըուիլ կուզէ. Մ'աշխատի ինքզինքը ե-
կեղեցականաց բարեկամ ձեւացունելու :
սակայն՝ ընդհակառակն տեսանք որ ազ-
դին անձնանուէր եւ հազուադիւս հկե-

դեցականաց հետ անարգութեամբ եւ
ատելութեամբ կը վարուի ծնած օ-
րէն 'ի վեր, ուրեմն՝ կրնա՞յինք հաւա-
տալ աղպիսի կեղծաւորեալ բարեկա-
մութեան մը :

Կը ճգնի՞ ինքզինքը Արուսաղէմի
միաբանութիւնը ամէն միաբաններէն ա-
ւելի սիրող ձեւացունելու . եւ կըսէ թէ
անոնց մեծագոյն մասին վրայ բարոյա-
կան մեծ փտահութիւն ունիմ :

Այս շողորթութիւնները կընէ քիչ .
մը առաջ չ'մէջ բերած թշնամական խօս-
քերը թեթեւցունելու համար . ինչ օ-
գուտ . այս խօսքէն վերջը ըրած արիւն-
կըղակութիւններն ալ ոչ թէ միայն կը
թեթեւցունէ իր բարեկամութիւնն եւ
փտահութիւնն . այլ բոլորովին կոչուն-
ջացունէ :

Օրինակի համար, Արուսաղէմի
գանձուն վիճակին վրայ խօսելով եր-

Կու վարդապետի բերան խօսք կը դնէ,
 եւ կը սէ որ « պատրիարքն եւ լուսա-
 րարը այնպէս շիներ կողոպտեր են, որ
 պօլսեցւոց շատ աշխատանք չէ մնացեր », -
 (Փարիզին ըսածին պէս) մերկիմաստա՛կ
 Մեղու, կը կարծես որ պօլսեցիներն
 ալ շինելու կողոպտելու են ելեր Արու-
 րուսեղէմի դանձը պատրիարքին եւ լու-
 սարարին պէս : Ապա ուրեմն՝ աղէ՛կ որ
 պօլսեցիք չկողոպտած անոնք շիներ
 շտկեր են . ինչու որ հիմայ անոնք որ
 մեռան, իրենց կապւտ կողոպուտը
 դարձեալ նոյն վանքին մեջ [Թողոյին ա-
 ռանց բան մը տանելու իրենց հետ .
 իսկ եթէ պօլսեցիք կողոպտած ըլլա-
 յին, յայտնի է որ անգամ մի ալ տե-
 ղը դառնալիք չունէր :

Ահաւասիկ, բարեկամութեան ա-
 պացոյց մի եւս Մեղուին կողմանէ առ
 միաբանութիւնն Արուսաղէմի : Ղարձ-

եալ՝ հելիք շնայեց Երուսաղէմի վան-
 քը իբրեւ այր առաջակաց հռչակելը ,
 հիմայ անոր պօլսոյ մէջ ունեցած տու-
 նըն ալ խարդախութեան գործարան կը
 հրատարակէ . 'ի նոյն փառս միաբանու-
 թեան եւ 'ի պատիւ Հայոց ազգին :

Ի՛նչ բարեկամութիւն քոյ եւ վա-
 տահութիւն ընդ քեզ եղիցի 'ի կորուստ
ՄԵՂՈՒՒ :

Պ.

Կ'ընդհանուր թե՛ նախընթաց աղերսա-
 գիրները մէջուխէջային շնորհիւ առօրին
 Ս'եղուին գրասենեակը ժամանելով՝
 պարտաօրեր են զ]Ս'եղուն որ դեռ
 մէկ աշխատութենէն հանգիստ չառած ,
 Պօլիսէն գ'երս գտնուած եկեղեցակա-
 նաց ուղղութեան եւ բարեւարութեան
 կարօտ վեճակին հարկաւոր ու շարժու-
 թիւնն ետ չթողու : Եւ ասոր աներկ-
 բայ ապացոյց այն է՝ որ ընդհանուր
 ժողովին գործը կարգի դնելէն վեր-
 ջը , իսկոյն նաւահանգիստը վազեր է .
 ուր 'Եփիմիոսայէն եկող հայերուն
 պատմած ցաւալի եղելութեան լու-
 ըը սրտին մեծ ցաւ պատճառելով :
 Նորէն մը կ'ընդհանրին վճայ բելանը բա-
 ցեր է :

Մ ենք Մ եղուին անձնական բժիշ-
կըն ըլլալու պատիւը շունինք, որ անոր
ցաւերուն ո՛ր աստիճան ճշմարիտ ըլլա-
լը հասկընայինք. սակայն իր ցաւոց
պատճառներն բացատրած լքալուն՝ սա
բաղդաւորութիւնը ունինք՝ որ մեծ դիւ-
րութեամբ կրնաք ըսել իրեն՝ որ պա-
րապ տեղը ցաւոց մէջ չհեծէ. եւ այ-
սուհետեւ ընթերցողներն ալ իրին ցա-
ւակից ընելու անխելքութիւնը գոր-
ծելէն դադրի :

Տեսած ենք խ՛լագարներ՝ որոնց ե-
րեւակայութիւնը խանգարած ըլլալով
ինքզինքնին երբեմն կր սկի բոցերու մէջ,
եւ երբեմն ծովուն ալիքներուն մէջ կար-
ծելով. կր պօռան կը պօջոտեն, կը ցա-
ւին եւ ուրիշներն ալ իրենց ցաւակից
ընել կուզեն : Մ եղուն ալ սաստիկ ցա-
ւոց մէջ կը աագնապի եղեր. բայց մենք
գիտենք որ իր ցաւոց պատճառները իե-

լագարներուն ցաւ պատճառող ցնորքներեն ընաւ տարբերութիւն չունին :

« Վանի մը տարիէ 'ի վեր բողոքական քարոզիչները մեծ յառաջագիմութիւն ըրած էին այս քաղքին մէջ եւ շատ հայեր որսացած , : Եւս պարբերութեան մէջ ժամանակի անորոշութիւնը մտքերնիս շփոթեց ալ նէ . Խորմեան Ղ'կրտիչ վարդապետին անունը այդ շփոթութիւնը փորատեց : Երգ' Խորմեան վարդապետը 1859 թուականին փետրվարի սկիզբը այս կողմերը եկաւ , ըսել է որ Նիկոմիդիոյ մէջ բողոքականութեան յառաջագիմութիւնը այս թուականներուն կը վերաբերի : Մեզուն ազգային կենաց տարեգիրն ըլլալով չենք երկմայիբ որ այս լուրին ստութիւնը իր տարեգրութենէն քաղած ըլլալու է . որուն մէջ հարկաւ այդ նշանաւոր գէպքը նշանակուած է կէտով . ստորակէ .

տով, վերջակէտով, ամիսով, օրով,
 զայրկեանով եւ ամէն հանգամանքնե-
 րով:

Սակայն՝ տեղւոյն դոնէ բողոքա-
 հանները կը յիշե՞ն արդեօք իրենց
 ցանկալի այդպիսի յառաջադիմութիւն
 մը նոյն քաղաքին մէջ: Կենդանի է մէ-
 չուխէշայն եւ կենդանի է անձն քոյ
 Մեղա՛ւ. թէ որ Ամերիկայի Պօռտ ըն-
 կերութիւնը իմանայ՝ որ դուք այսու-
 հետեւ արեւելքի մէջ բրօզէթանդու-
 թեան նկատմամբ այդպիսի յառաջադի-
 մութեան փափաքելի լուրեր պիտի հա-
 ղորդէք իրեն, ապահով եղիք որ այ-
 նուհետեւ միսիօնարական Աւետարների
 խճուագրացը հետ հաղորդութիւնը կը տ-
 րելով. անոնց ըլլալու վարձատրութիւն-
 ները քեզի կը դարցունէ:

Սենք կը հաւատանք որ Ազգային
 Ժողովները բնա՛ւ մէկ ժամանակ մը մէ-

չուխէջաներու հետ վերաբերութիւն
չունին . բայց Մեղուին ըսածին նա-
յելով՝ այս անգոյ յառաջադիմութեան
լուրը « ազգային ժողովներուն ականջն
հասածին պէս, փութացեր են հոն
վարդապետ մը խրկելու . որ գոնէ այ-
նուհետեւ բողոքական ըլլալու դիտա-
ւորութիւն ունեցողներուն միտքը դար-
ձունէ » : Այս բանին համար մէկ եր-
կու վարդապետի առաջարկիր են չէ
ընդունուեր » : Այս խօսքերը մեզի
մութ են , ինչու որ ազգային ժողովնե-
րը իրենց դորձոց համարատուութիւնը
տարուէ տարի մեզի ներկայացունելու
պարտք մը չունին , բայց այս աղէկ գի-
տանք որ Նիկոմիդիոյ մէջ եղած կրօ-
նական շարժմանց առաջն աւանելու չա-
փաւոր կարողութիւն ունեցող վարդա-
պետներ կը գտնուէին նոյն վիճակին մէջ .
ուստի ազգային ժողովոց վարդապետ մը

խրկելու որոշումը Մեղուին երեւակա-
յածին չափ հարկաւորութիւն չէր ու-
նենար :

Ինչ եւ իցէ՝ « Իւրմեան Մկրտիչ
վարդապետը սիրով յանձն առեր է
առաջարկութիւնը . եւ իր սրտին համե-
մատ մեծ ալ յաջողութիւն դտեր է հոն .
եւ ոչ մի այն այս յանձնարարութիւնը
կատարեր է , այլ եւ իր յորդորանքնե-
րովը Նիկոմիդացոց երկու սնուէ բա-
րեկարգ դպրոցներ ունենալու , եւ Սեր-
ճանութեան Թանգարան մը բանալու
պատճառ եղեր է , » :

Մեղուներն ալ երազ կը տես-
նան արգեօք : Եւս խնդիրը թէպէտ
եւ բնական պատմութեան կը վերաբե-
րի , սակայն՝ թէ որ Մեղուն այս
տեղ խելքին եկած չէ . հարկաւ ե-
րազի վրայ կը ննջէ : Եւ մենք կը յու-
սայինք որ Մեղուն իր արժանահաստ

Թղթակիցներէն առնելով մինչեւ հիմայ
իր երսզական ցնորքներուն բացատրու-
թիւն կուտայ . բայց մինչեւ ցայսօր այդ
մասին պատրաստականութիւն մը չտես-
նելով իր կողմանէ . կը յօժարիմք հա-
մառօտիւ մէջ բերնէ այդ գէպքին ստու-
գութիւնները :

1859 Թուականին սկիզբները Վե-
կոմիտիոյ վիճակին Պարտիլայ գիւղին
մէջ երկպառակութիւն մը ծաղկելով, հետ
զհետէ այն աստիճան զոյրացաւ որ՝ մէկ
կողմէն հռոմէական բաթկերսյ բերելու
համար Պօլիս գացողները աչեղան : Վե-
ճակին օրբօզան առաջնորդը իսկոյն հան
հասնելով՝ մէկ կողմանէ գիշեր ցերեկ
կ'աշխատէր սիրտերը հանդարտեցունե-
լու . եւ միւս կողմանէ Պօլիս հարկա-
ւոր տեղերը կը գրէր՝ որ խառնակները
շահին եւ անդերնին նվերադարձունեն :
Եւս կերպով ազգասիրաց միջամտու-

Թեամբը անոնք ալ շահուելով քիչ օ-
 րէն վերադարձան գերապատիւ Խորմեան
 Մկրտիչ վարդապետին ընկերակցու-
 Թեամբը, որ ազգային ժողովոց կողմանէ
 սրբազան առաջնորդին աջակից եւ գոր-
 ծակից ըլլալու համար խրկուած էր :
 Ըզգասէր վարդապետը առանց Նիկո-
 միդիա ելլելու՝ առօրին Պարտիզակ ան-
 ցաւ, եւ երկու շաբաթի չափ մնալով .
 ընտիր եւ ազգու ատենաբանութիւննե-
 րովն մեծապէս օգնեց սրբազան առաջ-
 նորդին անդուլ ջանիցը : Այլ փետրվար
 16ին անկից մեկնելով՝ նոյն իրիկունը
 հիւր եղաւ Նիկոմիդիա . ուր եկեղեց-
 ւոյ առեանը ընտիր եւ հայրենասիրա-
 կան ատենաբանութիւն մի ալ ընելով՝
 յաջորդ առաւօտուն Պօլիս վերադար-
 ձաւ : Ըհաւաստի Խորմեանին ո՛չ ՚ի Նի-
 կոմիդիա, այլ ՚ի Պարտիզակ երթալ
 գալուն պատմութիւնը . թէ որ մէջու-

խէչան այս խօսքերուն վրայ ընելիք
դիտողութիւն ունի նէ՛ յասպարէզ
թող ելլայ :

Սեղուն ալ իրրեւ հայ պա-
րերբերական մը (ըստ իւր երեւա-
կայութեանը՝ ազգային կենաց տարեդի-
րը) իրաւունք ունի ազգին անցեալ եւ
ժամանակակից դէպքերուն փատմիչն ըլ-
լալու . ըստ ֆմէչուխէչային հաւատալով
մէկին ըրածը միւսին տալու . եւ ուրի-
շին չըրածը անոր ընել տալու անսահ-
ման ազատութիւնը ո՞ր իշխանութենէն
ընդուներ է . իմանալ կը փափաքիմք :
Եսու ամենայնիւ Եստուած տուեր է որ
Սեղուն լրագրաց խմբագիրներու հետ
վիճելէն եւ ծօթայնի ծանուցանելէն զը-
լուխ վերցուցած չունի , ապա թէ ոչ՝
եթէ ՚ի գժբաղդութիւն և առց՝ ազ-
գային պատմութիւն մը գրելու ելլէր ,
ո՛ր գիտէ որչա՞փ կերպարանափոխ պիտի

ընե՛ր՝ Հայկայ, Արամայ, Տիգրանայ և
Վարդանանց եւ Վասակեանց գործե-
րը իրարու հետ շփոթելով :

Այս խօսքերուն Սեղուն վշտա-
նալու իրաւունք չունի. քանզի մեր են-
թագրութիւնը ձրի զժպարտութիւն չէ.
հապա՛ ծաւր պտուղէն ճանչնալ մի է.
հաւաստի՛կ փորձը :

Ինք կըսէ որ «Վերապատիւ Խորմ-
եան Սկրտիչ վարդապետին ազգու յոր-
գորանօքը՝ Աիկոմիդիոյ մէջ երկու սեռէ
տղայոց դպրոցներ՝ եւ մեծերու համար
ալ Վերծանութեան թանգարան մը
բացուեր է », : Աղէքսանդր մակեդոնա-
ցին Աքուլէսի գերեզմանին հանդիպե-
լով՝ երանութիւն տուեր է անոր Հո-
մերոսի պէս գովարան մը ունենալուն
համար. թերեւս ըլլան հիմայ ումանք ալ
որ Խորմեանը երանեն՝ Սեղուն իրեն
գովարան եւ ջատագով ունենալուն հա-

մար . ընդհակառակն մենք աւելի ատոր
կը ցաւինք՝ որ նոյն ալլախէր անձին
պատկառելի անունը մէջուխէչային խայ-
տառակ անունին քով դրուելուն դըժ-
բաղդութիւնը կը կրէ :

Իսկ Մեղուին խոշոր խոշոր սու-
տերուն զալով՝ Աիկոմիդիոյ մէջ Խորմ-
եանը ոչ երկու դպրոց բացուելուն
պատճառ եղած է . եւ ո՛չ Սերժա-
նու թեան թանգարանին , անոր Աիկո-
միդիա մէջ չիչեր մը միայն հիւր եղած
թուականին երկու դպրոցներն ալ կա-
յին , եւ այնպիսի բարեկարգ կերպով
որուն մէջ կը գտնուէր Մեղուին 125
թուոյն աշխարհք եկած օրը . Իսկ վեր-
ծանութեան թանգարանին սկզբնաւո-
րութիւնը անոր զսլէն , երկու տարի և
երկու ամիս յառաջ է , թէ որ Մեղուն
ասոնց հաւատալ չուզիր նէ , պօլիսէն
մինչեւ Աիկոմիդիա ամէն օր շոգենաւաց

երթեւեկութենէն զստ հեռագրաթեղ
այ կայ. մանաւանդ իր հաւատարիմ լըա-
րեր մէջու խէչային համար ամէն դիւրու-
թիւն կայ ստոյգը անստոյգէն որոշելու :

Հետեւարար՝ ասոնց նկատմամբ
թէ որ Խորբմեանին փառք բերող պա-
րագայ մը կայ նէ՝ նորին արժանապաա-
ւութեան՝ անձամբ թանգարան երթալ,
եւ մէկ ժամու մը չափ նստիլ, և հոն
իր սրտին ուրախութիւնը յայտնելէն
աւելի բան չտեսանք այն ատենը, եւ
չիմք յիշեր մինչե ցայսօր :

Աստի՛ գերապատիւ Խորբմեան վար-
դապետը պիտի ընդունի՞ արգեօք Մեղ-
ուին ընձեռեալ գովեստները, եթէ ի-
բրբ անարգ եւ շողոքորթ ծանձաղա-
բանութիւն պիտի արհամարէ թէ՛ գո-
վեստը եւ թէ՛ գովողը : Մ՛ենք՝ թէոր
Մկրտիչ վարդապետը ճանչնալու մա-
սին սխալած չենք, կարծեմք որ չյօժտոյ

քիր՝ երբ իր անփառասէր անունին ներ-
քեւ ուրիշներուն փառաց աւազակաբար
ստիպուած թիւն մը կը տեսնէ անձնա-
խաբ եւ ժպիրհ մէջուխէչային միջա-
մըտու թեան պատճառաւ :

Գանք որ՝ մէջուխէչան իր լսածին
նայելով՝ մենք ալ Մեղուին ըսածին
նայելով, « Մկրտիչ վաղապետին
դարձէն ետքը ասոնց հոգեւոր գլուխ
մնացեր է տէր Հակոբ քահանայն, որ
ընկերութեան պաշտպան է եղեր, իսկ
առաջնորդը եւ ո՛չ անգամ աս-
ոնց քով կը հանդիպէր » :

Աւրախ ենք որ մէջուխէչան « երբ
ազգասէր եւ բարեպաշտ եկեղեցական
մը կը տեսնէ, հրեշտակ Աստուծոյ կը
հռչակէ եւ կը հրատարակէ զանի » .
բայց զարմանալին այն է որ Մեղուին
հինգ տարուան փեթակը տակն 'ի վե-
րայ ընես նէ՛ այս ըսածին ապացոյց եր-

կուքէն կամ շատ շատ երեքէն աւելի չք
 գտնուիր, եւ աւելի ցաւալին այն է՝ որ
 եկեղեցական մը իրեն արժանեաց հա-
 մար հրեշտակ Մատուոյ հրատարակած օ-
 րը, անդին հինգ տասն հատն ալ իբ-
 րեւ սանդարամետական գեւեր կը հըռ-
 շակէ: Մայա ուրեմն մէջուխէչային բա-
 րեկամութիւնը կեղծաւորութիւն է, եւ
 մէկ քանի մասնաւորաց տուած գովես-
 տըն ալ եկեղեցականաց դէմ ունեցած
 անհնարին ատելութեանը դիմակ: Մէ-
 չուխէչան այս խօսքին կը սրտմտի, բայց
 թող համբերէ որ ըսածնիս փաստով
 ապացուցանենք: Մեղուին ձեռք ա-
 ռած թիւերնուս մէջ յիշատակուած են
 կրնօնական ժողովը, Արուսաղէմի միա-
 բանութիւնը, ինն եկեղեցական յակա-
 նէ յանուանէ, եւ երկու անանուն քա-
 հանայ, ընթերցողք կը տեսնան իրա-
 քանչիւրին դէմ մէջուխէչային փոխած

ստեղծեալ մաղձը . 'ի բայ աննելով
երկուքը միայն՝ որոց տուած գովեստին
արժէքն ալ վերը տեսանք : Եսով ըսել
կուզեմք որ մէշուխէչային յարձակուիք
Վիկոմի իոյ սրբաշան առաջնորդին անձ-
նական պատուոյն եւ արժանեաց դէմ,
ատիլութենէն զատ շարժառիթ չունի :

Առաջնորդին թանգարան չհանդի-
պիլը մէշուխէչային դէշ երեւցեր է,
բայց ո՛վ ինչ ընէ . կիրալի եւ սօն օ-
րերը առաջնորդական պաշտօնին վերա-
բեր'ալ գործերուն առատութենէն ա-
ռաջնորդը թանգարան չէ կրցեր եր-
թալ : Մանաւանդ որ եթէ ամէն թան-
գարան գտնուած տեղերը առաջնորդ
գտնուիլ անհրաժեշտ հարկաւորէր . Վի-
կոմիդիոյ վիճակին համար հինգ վեց ա-
ռաջնորդ, եւ Պօլսոյ համար քանի մը
պատրիարք ըլլալ պէտք էր : Մեղուն
թող դատապարտէ առաջնորդը թան-

դարան չերթալուն համար . սակայն Վիթ
 կոմիզիոյ Վերծանութեան թանգարանը
 կրնայ արդեօք ժխտել այն նպաստներն
 եւ պաշտպանութիւններն՝ զոր կը վա-
 յելէ միշտ սրբազան առաջնորդին կող-
 մանէ թէ յոյտնի եւ թէ ծածկարար
 Իսկ թանգարաններու համար հո-
 գեւոր գլխաւորութեան գալով շեմք հաս-
 կընար թէ այս ինչ տեսակ պաշտօն է .
 (տեսնանք մէջուխեչան ինք հասկըցած
 է) Թանգարանն ըլ թերցասիրութիւն
 տարածելու կեդրոն մը հասկընալով .
 գիտենք որ նախագահ , տեսնադպիր ,
 գանձապետ եւ խորհրդականներ պէտք
 են . բայց հոգեւոր գլուխ , եւ հոգեւոր
 եղած ատենն մարմնաւոր գլուխ պէտք
 ըլլալուն օրէնքը գեո չէինք պիտեր .
 արդեօք Պօլսոյ թանգարաններն ալ հո-
 գեւոր եւ մարմնաւոր գլուխներ ունի՞ն . եւ
 հետեւաբար մեր պիտցածներուն մէջ նի-

Համիդիոյ թանգարանէն զատ միւս թանգարանները՝ որ սյգպիսի օրէնքներ չունին, անոնք ալ ասուհետեւ հոգեւոր եւ մարմնաւոր գլուխներ ունենալու օրէնքը պիտի բնդունին:

Եւսու ամենայնիւ՝ « տէր Հակոբին հոգեւոր գլխաւորութիւնը եւ պաշտպանութիւնը անբաւական ըլալով գործը կ'աղաչ սկսէր է, եւ այս օրերս այն աստիճանի հասեր է՝ որ վերջսպէս դըպրոցին անբարեկարգութեան պատճառաւ կամ թողութեանսց գրղելովը շատերը սկսեր են իրենց տղայքը թողութեանսց դըպրոցը տալ »:

Անգահոյի՝ եւ ներողամիտ սիրելի թէ օր Արկիմիդիոյ առաջնորդէն վեճեճ ասնել կուզէս. աղգին հետ ի՞նչ բան սենիս՝ որ ասանկ շարուար կանարցես անոր պատիւը. Այոց ազգը իր շքաւոր վիճակին մէջ մի՞թէ թողութեաններուն

չա՛րի ալ հոգ շտանիր իր զաւակաց մը
տաւորական մշակութեանը, որ Աիկո-
միդիոյ մէջ հայերը իրենց դպրոցը բա-
րեկարգելու ամենեւին առհոգ, իրենցմէ
բազում պատիկ քիչուոր ժողովուրդի մը
դպրոցէն իրենց զաւակներուն օտարօտի
կրթութիւններ մուրալու ելլին: Օտան-
ժաղամի՛տ մէջտիւնէն. այս է Աիկոմի-
դիացւոց տուած գովեստդ՝ որ քիչ մը
վերը՝ փա՛նք իրենց, կը բացաբանէ իր.
եւ հիմայ խենթ կուլի պէս տուած կա-
թըդ դուն կը վսթես:

Ըսել է որ Աիկոմիդիոյ հայերը
այնքան ապուշ եւ անմիտ ցուցնել կու-
զես՝ որ Խորմեանի մը յորդորանքով
արթընցած՝ երկու դպրոց եւ թանգա-
րան կը բանան ՚ի փառս իրենց. եւ ա-
ռաջնորդին անհոգութեամբը իրենք ալ
անհոգ կը մնան. դպրոցները երեսի վը-
րայ կը ձգեն, եւ թանգարանն ալ վը-

տանգի մէջ կը թողուն՝ ՚ի նախատինս
որոյ : Անգղոսին հարցուն ենք նէ՝ առաջ-
նորդին , թէպէտ եւ դպրոցներ եւ թան-
գարան բացուելուն փոքրը ո՛չ եթէ
խորէմեանը . սյը Արիւմիդիացիք վայե-
լեցին :

Խեղճ մէջուիէչա , զսյրոթը այն
աստիճան շփոթեր է զինքը . որ մին-
չեւ անգամ դատողութիւնը կորսնցու-
նելով՝ չկրնար մտադիր ըլլալ թէ ըրած
պատճառաբանութիւնները եւ բերած
հետեւութիւնները իրարու հետ կապակ-
ցութիւն չունին : () րինակի համար ,
կըսէ որ « Արիւմիդիայի Արծանու-
թեան թանգարանը այս օրերս կալալ
սկսեր է ,, . ասկից կը հետեւընէ որ
« դպրոցն ալ անբարեկարգութեան վի-
ճակի հասեր է , որովհետեւ աշակերտք
բողոքականաց դպրոցը երթալ սկսե-
րն ,, . ահաւասիկ յայտնի դաւաճանու-

Թիւն մը՝ զոր հանճարեղ մէջուխէջան
իր բոլոր հնարքներովը շիրնար պարտը-
կել :

Ար հարցունենք նորին ի. Կասաու-
թեան , Թանգարան եւ դպրոց բառե-
րը իր մտքին մէջ ի՞նչ գաղափարներ կը
ճնին :

Թե որ ատենք է բիւրքը իրարմէ տար-
մեր բաներ կը ճանչնայ , եւ իրարու հետ
վերաբերու թիւն չունենալնին գիտէ , ա-
պա ուրեմն Թանգարանին կաղաքը դըպ-
րոցին անբարեկարգութեան պատճառ
գնեցը անտեղութիւն է . իսկ եթէ
Թանգարան եւ դպրոց բառերը մի եւ
նոյն գաղափարը նշանակելու կը ծառա-
ցեն իր մտքին եւ գործածած բառ
դրքին մէջ , նախ թող սորվի որ Կի-
կոմիդիացոց համար Թանգարան եւ
դպրոց զատ զատ բաներ են , եւ այդ
տարբեր երկու բառերուն նշանակութիւն

Նը Նոյնացընող բառակիրքը՝ որ լինողով
 ալ ըլլայ նէ, Սեղուին գրասէնեակէն
 դուրս ելած չէ տակաւին :

Թանգարանը կը կազայ թէ աղա-
 տաբայլ յոռաջ կը գիմէ : « Ոչ կարե
 քաղաք թագիլ որ ՚ի վերայ լերինն կայ-
 ցէ . . . ուզողը կրնայ փորձով օտուգել
 անձամբ հոն երթալով . եւ կը ցախնք
 որ նոյն բնկերու թիւնը դանդաղեցաւ
 մինչեւ ցայսօր իր պատուոյն արատ բե-
 ռող անհիմն լուր մը բողոքով ցրելու :
 Իսկ դպրոցը բարեկարգութեամբ զիճա-
 կի մէջ է, թէ անբարեկարգութեան,
 մենք՝ թէ որ մշտնջենան մեր խօսքին
 հաւատարմութիւն կընէ . կ'ապահովցու-
 նենք զինքը՝ որ 1859ին փետրվարի մէջ
 (Խորմեանին եկած թուականն է) ինչ
 զիճակի մէջ էր նէ, 1861 փետրվար
 20ին անկից բնաւ տարրերու թիւն չու-
 նէք . մեզի չհաւատար նէ՝ իրեն արժա-

նահատաւ բարեկամներուն թող հարցունէ :

Իսկ՝ դպրոցին անբարեկարգութեան պատճառաւ աշակերտաց բողոքականներուն դպրոցը երթալուն լուրը՝ եթէ Աւետարանի մէջ կարդայինք, թերեւս կըսէինք որ միսիօնարները արթնութեան մէջ սրտով ցանկացած բաներնին երազնուն մէջ տեսեր եւ գրեր են. բայց Ս՝ եղուին համար այս ենթագրութիւնք տեղիք չունենալով, ինչ լսելնիս չեմք գիտեր, անոր համար կը խնդրեմք իրեն որ իր տուած տեղեկութիւնը հաւատարմացունելու համար՝ Աիկոմիզիոյ Լուսաւորչականաց դպրոցներէն ելլելով բողոքականաց դպրոցը կրթութիւն մուրալու համար գացող աշակերտաց ցանկը հրատարակել բարեհաճի. եւ գիացած թող ըլլայ՝ որ մեծագոյն ծառայութիւն մը ըրած կըլլայ Աիկոմիզ

գիացուց՝ որոնք այս անհիմն լուրը Մեղ-
ուին մէջ կարդալով բաւական շփոթած
են :

Մինչեւ հիմայ Մեղուին մէջ բերած
չարեաց արդիւնքը՝ ըստ իւր վկայութեան
ամէն մարդ գիտնալուն համար յիշելը
զանց ըրիք է . բայց պատճառը ինք
միայն գիտնալուն համար մէջ բերելը
հարկաւոր դատեր եւ գրեր է, որ է
Նիկոմիդիոյ առաջնորդին անհոգութիւ-
նը : Ուստի՝ խստիւ կը կշտամբէ զՍտե-
փաննոս եպիսկոպոսը որ այս վտանկե-
րուն առաջն առնելու ծար մտածելու
աւել . Նրմաչէն վար իջնել չուզիր, այն
անձը՝ որ « եպիսկոպոս ըլլալու համար
մինչեւ իջմիածին երթալու երկար եւ
տաժանելի ճամբորդութիւնն յանձն ա-
ռեր է, իսկ ժողովորդն հովուելու
համար մինչեւ Նիկոմիդիա իջնալ չու-
զեր » :

Մեղուին այս խօսքերուն մէջ սրբա-
մքտութիւն մը կը նկատենք եպիսկոպոս
ըլլալու համար Աջմիածին գացողներուն
դէմ, որով առաջնորդներուն եպիսկոպոս
ըլլալը կամ աւելորդ խնդիր մը կը կար-
ծէ, կամ կուզէ որ ուրիշ տեղ երթան՝
բայց առանց յայտնելոյ թէ ո՛ւր. թէ որ
Ստեփաննոս եպիսկոպոսին միւշեւ Աջ-
միածին երթալը յանցանք է իրեն, կը
խնդրուի Մեղուէն որ եպիսկոպոս ըլ-
լալու համար երթալու տեղը որոշ զը-
բուցէ. որպէս զի գոնէ այսուհետեւ ըս-
լալու եպիսկոպոսներն այդ մեղադրան-
քէն ազատ մնան. Եւստակն ըսելով
մէջուխէջան Աջմիածին գացողներուն
կամ չգացողներուն հետ բան չունի,
իր նպատակը՝ նոր ընդունած ուղղութեան
պաշտօնը խղճի մտօք կատարելու կրօն-
բարերի. ուստի կը մեղադրէ Ստեփան-
նոս եպիսկոպոսը՝ որ անհողութեամբ

այսքան շարեաց տեղիք տուա՛ է :

Այսպիսի զոսպարտութիւններու ար-
համարհ լուսթենէն աւելի արժանաւոր
պատասխան տալ չէինք ու զի . եթէ
չգիտնայինք որ այս խօսքերուն մէջ՝
Ս եղուն իր խղճին եւ գիտա՛յցութեան
հակառակը կը գործէ : Աստի՛ կը կարդամք
իրեն այն սոսկաւի վա՛յը որ կամակո-
րութեամբ յարիքն շար եւ լոյսին խա-
ւար ըսողն՛րուն կը պատշաճի . վասն զի
“ Աիկոմիդիոյ առաջնորդը՝ Աիկոմիդիա
նստելու է . պատգամը՝ որոտացող Վիւթ-
հան պատգամախօսը երկու անգամ ան-
ձամբ Վրմաչ գացած եւ առաջնորդը հոն
չգտած ըլլալէն զատ , գիտէ ալ եղեր
որ այդ խօսքերը գրած միջոցին Ստե-
փաննոս կպիսկոպոսը՝ Աիկոմիդիա կը
գտնուէր երեք ամիսէն ՚ի վեր :

Իր գիտցածին դէմ այսպէս սուտ
խօսիչ եւ սուտին վրայ յամառիչ ինչ

Իսկ է : Աղոս առաքեալը հրէից ա-
 նիլա առննին մէջ յանգէտս քահանա-
 յապետը հայհոյելով ն'րբ իմացա թէ
 այն անարդու թիւնր ժողովրդեան իշխա-
 նի մը կը վ'րարերէր , թէպէտ եւ ա-
 նոր վրայէն արդէն իսպառ ջնջուած էր
 քահանայութեան հոգևոր պատուոյն
 ժառանգութիւնը . այսու ամենայնիւ զըղ-
 շաց , եւ իր տգիտութիւնը խոստովա-
 ճելով՝ խօսքը յետս կանչեց : Մ'եղուն՝
 որ եկեղեցոյ օրինաւ որ իշխանաւորները
 կը հայհոյէ միշտ որուն ձօցէն խաչ
 հանելով , ո'րը վարձկան անուանելով .
 թէպէտ եւ չեմք հասկըցած թէ մինչե
 ցայսօր անոնք ինչ վարձք պահանջած
 ունին իրմէն . ինք ո'ր օրէնքին կը ծա-
 աայէ արդեօք՝ որ անսվ ամ. ցուենէք
 զինչը :

Մ'եղուն օրէնք տլ անի

Մեղո՛ւ, Մեղո՛ւ խեղքդ տուն
 բե՛ր, և խոհեմութեան կշիռը ձեռք
 ա՛ն. իրաւ է որ դուն միշտ քեզի բա-
 րեկամական խրատ տուողներուն ձայնը
 արհամարելու անմասութիւնը կընես. սա-
 կայն գիտցի՛ր որ մարդիկ մեզուն կը սի-
 բեն իր անոյշ մեղրին համար, և ոչ
 թէ անոր սկար խայթոցին համար:

Քեզի համար զգաստութիւն
 կը մազթէ:

Նիկո՛սիւսի Բարեկամ՝ Տը:





300

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY



Տուր անզգամին զպտուսխանի ըստ
նորս անզգամե. թեանս

(Սիրոս)

9023041

201357410

